

Այս դասի (մտափվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև 4 ժամ:

ԴԱՍ 2

**ԵՐԵՒԱՅԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.
ՀՀ-ՈՒՄ ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ**

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուստուցման բաժնում և հեռուստուցման փաթեթի կրիչում)



Մինչև 5 րոպե

Այս դասի շրջանակներում կդիտարկենք.

- ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության առկա համակարգը,
- համակարգի գործունեությունը՝ որպես երեխայի լավագույն շահի որոշման և պաշտպանության երաշխիք,
- լավագույն շահի սահմանման համար անհրաժեշտ մասնագետներից ակնկալվող գիտելիքներ ու հմտություններ,
- լավագույն շահի գնահատման տեխնիկաներ,
- լավագույն շահի գնահատման ու սահմանման գործիքներ:

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 190 րոպե

«Երեխայի լավագույն շահի» սկզբունքը մշտապես եղել է տեսական և գործնական շրջանակների քննարկումների առարկա: Երեխաների հետ իրականացվող ցանկացած աշխատանք բացառապես ելնում է լավագույն շահի սկզբունքից՝ կանոնակարգում գտնելով իրավական տարբեր փաստաթղթերում: Երեխայի լավագույն շահի սկզբունքը գործում է բոլոր երեխաների համար, այդ թվում՝ իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած, հանցագործության վկա, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված:

Փորձե՛ք ինքնուրույն սահմանել «երեխայի լավագույն շահ» հասկացությունը:

Այնուամենայնիվ, լավագույն շահի սկզբունքը գործնականում կիրառելու մեխանիզմները հաճախ լինում են անորոշ: Երեխաների իրավունքների և սոցիալական ոլորտի տարբեր կազմակերպությունների աշխատակիցները առօրյա աշխատանքում հանդիպում են այնպիսի իրավիճակների, երբ անհրաժեշտ է կայացնել երեխայի կյանքին վերաբերող բազմապիսի որոշումներ՝ ելնելով երեխայի լավագույն շահից:

Արդարադատության ոլորտում նման որոշումները ներառում են.

- անչափահասի նկատմամբ պատժի տեսակի ընտրությունը,
- քրեական պատասխանատվությունից ազատումը,
- պատժից ազատումը,
- ձերբակալումը,
- դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառումը,
- երեխայի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում կարիքների գնահատումը,
- երեխայի երկարատև աջակցության և խնամքի

Մտաբերե՛ք և վերլուծե՛ք Ձեր մասնագիտական պրակտիկայից այնպիսի դեպքեր, երբ անհրաժեշտ էր որոշում կայացնել՝ ելնելով «երեխայի լավագույն շահից»:

միջոցների ընտրությունը:

Երեխայի լավագույն շահի որոշումը բախվում է մի շարք դժվարությունների հետ, որոնք պայմանավորված են իրական կյանքի տարբեր իրավիճակներում առկա հակասություններով, ռեսուրսների սակավությամբ և մեխանիզմների սահմանափակությամբ:

Երեխայի իրավունքների պաշտպանության գործիքների շարքում առանցքային տեղ է զբաղեցնում 1989թ.-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան: Ի լրումն Կոնվենցիայի նորմերի՝ գոյություն ունեն այլ համապատասխան իրավական հիմքեր՝ **ինչպես միջազգային, այնպես էլ ազգային** մակարդակում, որոնք կարող են ազդել երեխայի վերաբերյալ ցանկացած որոշման վրա:

Միջազգային փաստաթղթերին ավելի մանրամասն կձանդթանաք Դաս 4-ում:

Ազգային փաստաթղթերն են.

- ՀՀ ընտանեկան օրենսգիրքը,
- «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը,
- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
- «ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումը և այլն:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է հիմնական 4 սկզբունք.

1. Երեխաների նկատմամբ կիրառվող բոլոր գործո-

դրություններում երեխայի լավագույն շահը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն (Հոդված 3):

2. Ցանկացած խտրականություն՝ անկախ երեխայի ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից, պետք է բացառվի (Հոդված 2):

3. Մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի անքակտելի իրավունք, և առավելագույնս ապահովում են երեխայի առողջ զարգացումը (Հոդված 6):

4. Երեխաները պետք է հնարավորություն ստանան օգտվելու ազատ արտահայտման իրենց իրավունքից՝ իրենց վերաբերող բոլոր դեպքերում (Հոդված 12) [1]:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան ամրագրել է յուրաքանչյուր երեխայի կրթական, առողջապահական, մշակութային, տնտեսական, բավարար կենսամակարդակ ունենալու, ազգային ինքնությունը պահպանելու, ընտանիքում մեծանալու և ընտանիքի հետ վերամիավորվելու, խոսքի, մտքի, խղճի, կրոնի և մի շարք այլ իրավունքներ ու ազատություններ, ինչպես նաև կոնվենցիան վավերացրած պետությունների պատասխանատվությունն այդ իրավունքների ու ազատությունների իրագործման հարցում: Կոնվենցիան վավերացրած պետություններին պահանջ է ներկայացվում երեխային վերաբերող որոշումներ կայացնելիս ու իրագործելիս, ինչպես նաև երեխային առնչվող այլ գործընթացներ ու ընթացակարգեր իրականացնելիս առաջնորդվել երեխայի լավագույն շահով և նպաստել, որ ընտանիքի, համայնքի և պետության համար երեխայի իրավունքները դառնան մշտական հոգածության առարկա:

Փորձե՛ք համադրել ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթները հայաստանյան մշակութային համատեքստի հետ:

1992 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և արդեն 1996 թվականին ընդունել է ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին», որը համապատասխանեցված է ՄԱԿ-ի համանուն կոնվենցիային, բխում է վերջինիս հիմնական դրույթներից ու նպատակուղղված է ապահովելու երեխայի իրավունքների օրենսդրական ամրագրումն ու իրագործումը հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտներում:

«Երեխայի իրավունքների մասին» օրենքը նախատեսում է հավասար իրավունքներ բոլոր երեխաների համար՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների ազգությունից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի առողջական վիճակից, ծննդյան և այլ հանգամանքներից: Իրավունքների հավասարությունը նշանակում է նաև իրավունքների իրագործման հնարավորությունների և պայմանների հավասարություն ու մատչելիություն բոլոր երեխաների և նրանց ընտանիքների համար: Այդ նպատակներն իրագործելիս օրենքը հստակ պարտականություններ է վերապահում պետական համապատասխան մարմիններին, որպեսզի վերջիններս ապահովեն երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ընթացակարգերը, նպաստեն իրավունքների վերականգնմանը (եթե խախտվել են) և համապատասխան պայմաններ ստեղծեն երեխաների իրավունքների իրագործումն ապահովելու համար:

Երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգը ներկայացված է Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովով, որը պատասխանատու է ոլորտում

համապատասխան քաղաքականություն մշակելու, ռազմավարական ծրագրեր իրականացնելու, տարբեր ոլորտներում երեխաների իրավունքների իրագործման կամ պաշտպանության նպատակով համապատասխան օրինագծեր մշակելու կամ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու համար: Այսինքն, ենթադրվում է, որ ապահովվում է լավագույն շահից բխող օրենսդրության առկայություն:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները գործում են ՀՀ յուրաքանչյուր մարզում՝ որպես մարզպետարանների կառուցվածքային ստարաբաժանումներ, ինչպես նաև Երևանում՝ որպես քաղաքապետարանի բաժին: Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների լիազորությունները նպատակաուղղված են ապահովելու երեխաների իրավունքների պաշտպանությունը մարզային մակարդակում:

Համայնքային մակարդակում գործում են խնամակալության և հոգաբարձության մարմինները և համապատասխան հանձնաժողովները: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նպատակն է երեխայի ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումն ընտանիքում՝ այնտեղ եղած հիմնախնդիրների վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցով, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը, խնամքի կազմակերպումն ու խնամքի իրականացման հանդեպ վերահսկողության իրականացումը: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները և նրանց խնամքի կազմակերպումը սերտորեն կապված են երեխայի լավագույն շահի սահմանման խնդրի հետ: Երեխան կարող է ճանաչվել առանց ծնողական

Ուրվագծե՛ք երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի յուրաքանչյուր մակարդակի հետ Ձեր մասնագիտական համագործակցության շրջանակները:

խնամքի մնացած, եթե ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են: Խնդրահարույց է այն փաստը, որ «ծնողները խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից»՝ որպես երեխային առանց ծնողական խնամքի մնացած ճանաչելու հիմք, հազվադեպ է կիրառվում ՀՀ արդարադատության համակարգում, ինչը սահմանափակում է խնամքի առկա այլընտրանքներից (որդեգրություն, խնամատարություն և այլն) օգտվելու երեխայի իրավունքը:

Այսպիսով, ցանկացած մարմին երեխաների իրավունքների պաշտպանության ցանկացած մակարդակում, երեխայի հետ աշխատող ցանկացած մասնագետ, դատարան կամ որոշում կայացնող որևէ այլ մարմին, ով գնահատում և սահմանում է երեխայի լավագույն շահը, պետք է առաջնորդվի Կոնվենցիայում առկա սկզբունքներով: Հիշյալ սկզբունքներին հետևելը չի նշանակում ունենալ մեկ համընդհանուր բանաձև, որը կարելի է օգտագործել բոլոր իրավիճակներում և բոլոր երեխաների համար: Մի իրավիճակում գտնվող երեխայի համար գնահատված լավագույն շահը կարող է լավագույնը չլինել մեկ այլ իրավիճակում գտնվող երեխայի համար: «Լավագույն շահ» եզրույթը նշանակում է երեխայի բարեկեցություն [2], որի վերջնական նպատակը երեխայի անվտանգությունն է և առաջնահերթ կարիքների բավարարումը: Այդ բարեկեցությունը որոշվում է մի շարք առանձին հանգամանքներով, ինչպիսիք են՝ տարիքը, երեխայի հասունության մակարդակը, ծնողների ներկայությունը կամ

Հիշե՛ք, որ «երեխայի լավագույն շահը» որոշվում է յուրաքանչյուր տվյալ իրավիճակին համապատասխան:

բացակայությունը, երեխայի սոցիալական ցանցը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ-մշակութային խմբակներին և այլն): Այսինքն, «Երեխայի լավագույն շահ» ասելով, դիտարկվում է անհատ երեխան տվյալ, իրեն հատուկ իրավիճակում:

Որոշ պետություններ, օրինակ, ԱՄՆ-ի մի շարք նահանգների կանոնադրությունում հստակ սահմանվում են որոշակի սկզբունքներ, որոնց վերլուծության հիման վրա ձևավորվում է երեխայի լավագույն շահը: Այդ սկզբունքներն են՝ ընտանեկան ամբողջականության և նախասիրությունների կարևորությունը (այն թույլ է տալիս խուսափել երեխայի ընտանիքից հեռացումից), երեխայի առողջությունը, անվտանգությունը և պաշտպանությունը, համոզվածություն այն բանում, որ ընտանիքից անջատված երեխային կտրամադրվի անհրաժեշտ խնամք, բուժում և ուղղորդում [3]: «Երեխայի լավագույն շահը» սահմանվում է հաշվի առնելով մի շարք գործոններ (էմոցիոնալ կապեր և հարաբերություններ երեխայի և նրա ծնողի/ների/խնամակալների, ընտանիքի անդամների հետ, ծնողի/ների/խնամակալների հնարավորությունները երեխային ապահովելու անվտանգ միջավայրով, համապատասխան սննդով, հագուստով և բժշկական խնամքով, երեխայի և ծնողների մտավոր և ֆիզիկական առողջության կարիքները, ընտանեկան բռնության փաստը ընտանիքում և այլն), որոնք կապված են երեխայի, նրա ծնողների կամ խնամակալների առանձնահատկությունների հետ: Հաշվի են առնում նաև երեխայի կարծիքը և ցանկությունները [1]:

Ըստ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ «Երեխայի լավագույն շահ» գնահատել նշանակում է գնահատել բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կյանքում որևէ միջամտություն

իրականացնելու համար: Ընդ որում՝ այդ որոշումը բավական անհատական է, քանի որ յուրաքանչյուր դեպք, յուրաքանչյուր երեխա անհատ է և պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Երեխայի լավագույն շահի գնահատումը ենթադրում է հարցազրույցների իրականացում երեխայի և նրա ծնողների/խնամակալների հետ, *տնային այցելությունների իրականացում*, տեղեկատվության ստացում բոլոր այն կառույցներից, որտեղ երեխան ընդգրկված է եղել նախկինում կամ ընդգրկված է տեղեկատվության ստացման պահին: Գնահատման ընթացքում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել երեխայի ցանկությունների և կարիքների, հմտությունների և զարգացման առանձնահատկությունների վրա: Երեխան պետք է բոլոր դեպքերում հնարավորություն ունենա արտահայտելու իր տեսակետները, կարծիքն ու ցանկությունները: Երեխան իր կարծիքը կարող է արտահայտել տարբեր կերպ. որպես կանոն 10 տարեկանից բարձր երեխաները իրենց կարծիքը կարող են արտահայտել հարցազրույցների, իսկ 10 տարեկանից փոքր երեխաները՝ տարբեր թերապիաների միջոցով: Գնահատումն ու առաջարկությունները պետք է իրականացվեն գրավոր, կատարվեն համապատասխան փաստաթղթավորումներ՝ երեխայի հետ իրականացվող բոլոր տեսակի միջամտությունները տեսանելի և հետագա մոնիթորինգի համար դյուրին դարձնելու նպատակով:

«Երեխայի լավագույն շահը» սահմանելիս՝ ուշադրություն դարձրեք երեխայի կարծիքը հաշվի առնելու կարևորությանը:

Կոնվենցիայի անդամ պետությունները պարբերաբար հաշվետվություն են ներկայացնում ՄԱԿ-ի՝ երեխայի իրավունքների կոմիտեին, որի հիման վրա Կոմիտեն հրապարակում է Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանում կոնվենցիայի իրականացման վերաբերյալ: Վերջին Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն վերահաստատեց, ի թիվս այլոց, պետության կողմից հետևյալ գործողությունների

իրականացման անհրաժեշտությունը թե՛ օրենսդրության և թե՛ իրավակիրառ պրակտիկայի մակարդակներում.

- Անչափահասների նկատմամբ նախնական կալանքի կիրառումը միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և շատ կարճ ժամկետով,
- Մեղիացիայի, հասարակական աշխատանքների և այլ այլընտրանքային միջոցների կիրառում, որոնք թույլ կտան խուսափել քրեական պատասխանատվությունից և դրա հետ կապված ստիգմատիզացիայից և ապահովել արդյունավետ վերաինտեգրում,
- Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների պաշտպանության և նրանց համար ծառայությունների հասանելիության ապահովում:

Կոմիտեն նաև առաջարկում է անդամ պետություններին ձևավորել Կոնվենցիայի իրականացման համար առկա ռեսուրսների բաշխման համապատասխանության, հավասարաչափության և արդյունավետության մոնիթորինգի և գնահատման մեխանիզմներ: Կոնվենցիայի իրականացման մոնիթորինգի մեխանիզմը պետք է նախատեսված լինի անդամ պետությունների կառավարությունների կողմից երեխայի պաշտպանության համակարգի բոլոր մակարդակներում, որքան հնարավոր է շուտ, որպեսզի ապահովվեն երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը և միջոցառումները:

Ընդհանուր առմամբ երեխայի լավագույն շահի գնահատումը ենթադրում է հետևյալ ընթացակարգերն ու գործողությունները.

Կարիքների գնահատում, որը ենթադրում է.

• երեխայի, ընտանիքի և ծնողի/ների պատմության ուսումնասիրություն, (կամ համապատասխան դեպքում երեխայի ծնող/ներ/ից առանձնացման պատմություն),

• երեխայի համար պատշաճ սննդի մատչելիություն,

• երեխայի և ընտանիքի սանիտարահիգիենիկ պայմաններ,

• երեխայի և ծնողների/օրինական ներկայացուցիչների բնակվելու պայմանների գնահատում.

○ բնակտարածություն և սենյակների քանակ

○ ջրամատակարարում և կոյուղի

○ էլեկտրականություն (առկայություն և անվտանգություն)

○ ջեռուցման տեսակը, որակը և անվտանգությունը

○ բնակության շրջանի անվտանգությունը (սոցիալական և էկոլոգիական)

• երեխայի և ծնողների/օրինական ներկայացուցիչների առողջական վիճակի և բժշկական միջամտության ու հասանելիության անհրաժեշտության գնահատում՝

○ հաշմանդամություն (տեսակը, խումբը, սահմանափակումները)

○ քրոնիկ հիվանդություններ (տեսակը, սահմանափակումները)

• կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը,

• երեխայի առօրյան, զբաղվածությունը, խմբակներին մասնակցությունը, ընկերները, շփման շրջանակը,

• երեխայի սոցիալ-հոգեբանական պաշտպանությունը,

• այլ կարիքների գնահատում:

Կարիքների լիարժեք գնահատման համար կիրառվում են հետևյալ գործիքներն ու տեխնիկաները.

Նկատի ունեցե՛ք, որ կարիքների գնահատումը պահանջում է բայց չի սահմանափակվում երեխայի կյանքի թվարկված ոլորտներով:

Տունայց - Երեխայի լավագույն շահի գնահատման ընթացքում անհրաժեշտ տեղեկատվության ստացման, ինչպես նաև առկա տեղեկատվությունն ամբողջացնելու և որոշ դեպքերում ստուգելու համար իրականացվում է տունայց: Տունայց իրականացվում է՝ դիտարկելու երեխային բնական սոցիալական միջավայրում, բացահայտելու երեխայի լավագույն շահի սահմանման համար կարևոր գործոնները, որոնք այլ տարբերակով հնարավոր չէ պարզել, համոզվելու, որ երեխան կարող է բնակվել այնտեղ, որտեղ բնակվում է, կամ բացահայտելու, որ կարիք կա երեխային անհապաղ տեղափոխել այլ վայր իր բնակավայրից, որովհետև տվյալ դեպքում առկա են ռիսկեր:

Հարցազրույց չափահաս անձի հետ (ծնող, խնամակալ, խնամատար ընտանիքի անդամ), եթե կա անհրաժեշտություն կամ կիրառելի է: Հարցազրույցը տեղեկատվության հավաքման հիմնական մեթոդներից է: Հարցազրույցի համար նախապես կազմվում է հարցաշարը, որտեղ ներառվում են այնպիսի հարցեր, որոնց պատասխանը կարևոր է դեպքի հետ աշխատանքի համար: Հարցազրույցի մեջ շատ կարևոր է ուշադրություն դարձնել հարցազրույցի փուլերին՝ սկզբին, ընթացքին և ավարտին:

Հարցազրույց երեխայի հետ - Երեխայի լավագույն շահի գնահատման ընթացքում կարևոր է իմանալ երեխայի մտքերը, զգացմունքներն ու կարծիքները: Շատ երեխաների համար ավելի հեշտ է խոսել ընկերոջ, ծնողի կամ օրինական ներկայացուցիչների ներկայությամբ: Սակայն, այս դեպքում անհրաժեշտ է զգուշություն ցուցաբերել, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ ծնողները կամ օրինական ներկայացուցիչները գործընթացում կարող են անձնական շահեր հետապնդել և

թույլ չտալ երեխային ազատորեն արտահայտել իր տեսակետները: Երեխայի նկատմամբ չարաշահումների մեջ կասկածվող չափահասները չպետք է ներկա գտնվեն հարցազրույցներին: Հարցազրույցի տևողությունը պետք է համապատասխանեցվի երեխայի տարիքին, հասունության մակարդակին և հոգեբանական վիճակին: Անգամ այդ դեպքում, երբ երեխան չի կարողանում ձևավորել իր սեփական կարծիքը այս կամ այն սահմանափակումների պատճառով, երեխայի լավագույն շահը գնահատող մասնագետները պետք է ապահովեն պայմաններ, որպեսզի երեխան արտահայտի իր դիրքորոշումը: Հատկապես կարևոր է հասկանալ՝ երեխան ունի՞ ցանկություն, որ իր տրամադրած տեղեկատվությունը օգտագործվի, թե՞ ոչ: Բոլոր այն դեպքերում, երբ երեխան դեմ է որևէ տեղեկատվության օգտագործմանը, լավագույն շահի գնահատման մասնագետները պետք է պատշաճ կերպով արձանագրեն առարկությունները և դրանց պատճառները: Վերը շարադրված նյութի շնորհիվ մենք պատկերացում ստացանք «երեխայի լավագույն շահի» սահմանման և գնահատման վերաբերյալ, ինչպես նաև կիրառման ոլորտների մասին:

Հաջորդ դասին կներկայացնենք Հայաստանում անչափահասների գործերով արդարադատության համակարգի՝

- կառուցվածքը,
- դերակատարները,
- վերջիններիս գործառույթները:

ԲԱՌԱՐԱՆ

Երեխայի լավագույն շահ – Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ-մշակութային խմբակներին և այլն), ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը:

Երեխայի լավագույն շահերի սահմանում – Ընթացակարգային երաշխիքներ ներառող պաշտոնական գործընթաց, որը պարտադիր է երեխայի վրա ներգործող կարևոր որոշումների ընդունման դեպքում: Այն պետք է ապահովի երեխաների պատշաճ մասնակցությունն առանց խտրականության, ներգրավի համապատասխան



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 15 րոպե

ուղորտների որոշում կայացնողներին և ապահովի բոլոր համապատասխան գործոնների հավասարակշռությունը՝ լավագույն տարբերակը գնահատելու համար:

Երեխայի կարիքների գնահատում - Ենթադրում է մի խումբ հարցերի առաջադրում, որի նպատակն է ճանաչել շահառուին, նրա խնդիրները և այն իրավիճակը, որում հայտնվել է նա, որպեսզի պլանավորվի հիմնախնդրի լուծման ընթացքը:

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով - ՀՀ-ում գործող երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգի ազգային մակարդակի օղակ, որը պատասխանատու է ուղրտում համապատասխան քաղաքականություն մշակելու, ռազմավարական ծրագրեր իրականացնելու, տարբեր ուղրտներում երեխաների իրավունքների իրագործման կամ պաշտպանության նպատակով համապատասխան օրինագծեր մշակելու կամ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու համար:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները և համապատասխան հանձնաժողովները - ՀՀ-ում գործող երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգի համայնքի մակարդակում գործող բաղադրիչներ: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նպատակն է երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը:

Հարցազրույց - Նպատակաուղղված զրույց երկու անձանց միջև, որոնցից մեկը հարցեր է տալիս, մյուսը պատասխանում է դրանց:

Տունայց - Երեխայի լավագույն շահը սահմանելու համար

օգտագործվող «գործիքներից», որի միջոցով հնարավոր է գնահատել ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը և ավելի արդյունավետ դարձնել սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացը:

Ուղղորդում – Սոցիալական աշխատողի հիմնական գործառույթներից մեկը, որի նպատակն է շահառուին ծանոթացնել առկա կազմակերպությունների ցանցին և ձևավորել դրանցից օգտվելու հմտություններ՝ իր կարիքները լավագույնս բավարարելու համար: